ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝ զբաղեցրած պաշտոնը.

Արմեն Մինասյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Թբիլիսի (Վրաստան), 2023 թվականի հուլիսի 10-ից մինչև հուլիսի 14-ը:

3. Հրավիրող կողմը.

Ասիական Զարգացման Բանկ:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել կլիմայական լուծումների քննարկման վերաբերյալ տարածաշրջանային վերապատրաստման աշխատաժողովին և ձեռք բերել գիտելիքներ կլիմայական փոփոխությունների հետևանքով առաջացած խնդիրների, և դրանց վրա ազդեցության միջոցառումներ իրականացնելու հնարավորությունների վերաբերյալ:

5. Քննարկված թեմաները՝

Դասընթացի ընթացքում, մանավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Կլիմայի բնագավառում համապարփակ քաղաքականություն և երկարաժամկետ ռազմավարություն.
2) Կլիմայական ռիսկերի կառավարում, հարմարվողականություն և կայունություն.
3) Կլիմայի ֆինանսավորում.
4) Մասնավոր հատվածի ներդրումներ.
5) Համապատասխանեցում Փարիզյան համաձայնագրի հետ.
6) Տարածաշրջանային համագործակցություն և կլիմայի փոփոխության ընթացիկ նախագծեր:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ներկայացված նյութերը և քննարկված թեմաները հիմնականում համապատասխանում էին ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության առջև դրված խնդիրներին և դրանք կիրառելի կլինեն վարչության գործառույթների շրջանակներում իրականացվող աշխատանքների ընթացքում:

Գործուղվող՝

Եկամուտների քաղաքականության և
հարկային վարչարարության մեթոդաբանության
բաժնի գլխավոր մասնագետ Արմեն Մինասյան

17 հուլիսի 2023թ.